

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ՍՊՈՐՏԻ



МИНИСТР
ОБРАЗОВАНИЯ, НАУКИ И СПОРТА
НАГОРНО-КАРАБАХСКОЙ
РЕСПУБЛИКИ

MINISTER
OF EDUCATION, SCIENCE AND
SPORT OF THE REPUBLIC OF
NAGORNO-KARABAKH

ՆԱԽԱՐԱՐ

ք. Ստեփանակերտ, Թումանյան փ. 48, Հեռ./Տեղ./Tel.: /047/ 941935, 977119 ֆաքս/Փաքս/Fax: 047-971537, Степанакерт, ул. Туманяна 48, st. Tumanyan 48, Stepanakert E-mail: kgn.nkr@mail.ru

N 01-296

«31» մարտի, 2017թ.
ք. Ստեփանակերտ

Հայաստանի Հանրապետության
կրթության և գիտության նախարար
պարոն Լ. Մկրտչյանին

Հարգելի պարոն նախարար,

Տեղեկացնում եմ Ձեզ, որ 2017 թվականի առաջին եռամսյակում Արցախի Հանրապետությունում իր աշխատանքներն է իրականացրել ՀՀ կրթության և գիտության նախարարության Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի շարժական ինտերնետային համակարգչային կայանը: Թվով 4 բնակավայրերում դասընթացներին մասնակցել և վերապատրաստվել են 77 ուսուցիչներ և 118 աշակերտներ: Կայանի միջոցով կազմակերպվել են տարբեր առարկաներից հեռավար համաժամանակյա առցանց դասեր:

Արցախ է գործուղվել նաև ԿՏԱԿ-ի մասնագետների խումբը՝ շրջանների և Ստեփանակերտ քաղաքի դպրոցներում համակարգչային դասարանների ծրագրային և տեխնիկական սպասարկումն իրականացնելու նպատակով: Ընթացքում են Արցախի հանրակրթական ուսումնական հաստատությունների 2016-2017 ուստարվա վարչական վիճակագրական տվյալների հավաքագրման, ամփոփման և հրատարակման, ինչպես նաև Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության պաշտոնական կայքի թարմացման աշխատանքները:

Ծնորհակալություն եմ հայտնում Ձեզ և «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ համագործակցության շարունակականության ապահովման, ցուցաբերված մասնագիտական մոտեցման և իրականացվող աշխատանքներին անմնացորդ նվիրման ու կարևորության գիտակցման համար:

Հարգանքով՝



Ս. ԱՐՅԱՆ

Մուտք No 10470-17
« 03 » 04 2017թ.